

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ Ա Կ Ր Ո Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Կ Ա Ր Գ Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

à ôê à ôøÛ² Î ² Û Ò° è Û² ðÎ

*Տնտեսագիտական մասնագիտությունների
ուսանողների համար*

Ն. Բ. Ղուշյանի խմբագրությամբ – ղեկավարությամբ

ԵՐԵՎԱՆ - 2002

ՀՏԴ 33(07)
ԳՄԴ 65 ց73
Մ 188

Հրատարակության է երաշխավորվել ԵՊՏԻ մակրոտնտեսական
ամբիոնը
Դասախոս՝ տ.գ.դ., պրոֆ. Ա. Հ. Արշակյան

Մ 188 Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ - Եր.:
Տնտեսագետ, 2002. - 480 էջ:

Ուսումնական ձեռնարկում լուսաբանվում են մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության առարկան և խնդիրները, մեթոդաբանությունը և մեթոդները, տնտեսական մոդելները, հոսքերը, պաշարները և մակրոտնտեսական ցուցանիշների համակարգն ու դրան ներկայացվող պահանջները: Առանձնակի ուշադրություն է դարձվում մակրոտնտեսական կարգավորման պետական մարմինների տնտեսական գործառույթների մեկնաբանմանը, ՀՀ կառավարման մարմինների կառուցվածքի ուսումնասիրմանը: Պարզաբանվում են երկրի մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրները տնտեսական և սոցիալական ոլորտներում: Հանգամանորեն ներկայացվում են ամբողջական եկամտի արտադրության, բաշխման և օգտագործման մեխանիզմները, տնտեսական աճի գնահատման, ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի մոդելները, ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության, մակրոտնտեսական հավասարակշռության և ՀՀ գնագոյացման քաղաքականության հիմնախնդիրները:

Ձեռնարկում քննարկված հարցերը կարող են օգտակար լինել ուսանողության, դասախոսների, ասպիրանտների և գործնական աշխատողների համար:

Մ $\frac{0601000000}{719(01)2002}$ 2002

ԳՄԴ 65 ց 73

ISBN 99930-77-22-4

«Տնտեսագետ» հրատարակչություն, 2002

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից շուկայական տնտեսությունը հանդես է գալիս որպես «խառը» տնտեսական համակարգ: Իսկ դա նշանակում է, որ տնտեսության զարգացման վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրանց կատարման համար պատասխանատու են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլ նաև պետությունը՝ ի դեմս կառավարության: Տնտեսական հարաբերությունների կարգավորումը հատկապես կարևորվում է անցումային շրջանում գտնվող երկրներում, որոնցից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունն է: Տնտեսության մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտությունը սովորաբար բացատրվում է շուկայական հարաբերությունների անկատարությամբ և թերություններով, որոնք դրսևորվում են տնտեսական ու սոցիալական բազմաթիվ խնդիրները շուկայական ինքնակարգավորման միջոցով լուծելու անկարողության հետևանքով: Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հասարակական բարիքների նկատմամբ պահանջարկի առկայությամբ և պետական միջոցներով դրանք բավարարելու գիտակցությամբ, ինչպես նաև՝ սոցիալական բարիքների բավարարման առանձնահատկություններով և տնտեսության մեջ պետական հատվածի գոյությամբ: Հետևաբար, մակրոտնտեսական կարգավորման խնդիրն առաջանում է տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ դիտարկելու և դրա բնականոն զարգացումն ապահովող միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունից: Չնայած սուբյեկտները ազատ են իրենց գործողություններում, այնուամենայնիվ նրանք առնչվում են երեք տիպի հարաբերությունների՝

- ♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև,
- ♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների միջև,
- ♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների միջև:

Այդ հարաբերությունները պահանջում են պետական և իրավական կարգավորում: Իսկ դրա համար անհրաժեշտ է տնտեսավարման իրավահավասար պայմաններ ստեղծել բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, ապահովագրել դրանց գործունեությունը, կարգավորել երկրի ֆինանսական վիճակը և տնտեսական զարգացումը: Ասվածից հետևում է, որ մակրոտնտեսական կարգավորումն անհրաժեշտ է երկրի համապետական խնդիրները լուծելու, աշխատուժի լրիվ զբաղվածությունն ապահովելու, ընդհանուր տնտեսական հավասարակշռություն ստեղծելու, տնտեսության ճյուղային կառուցվածքը կատարելագործելու, արտադրության ռեսուրսների տարածքային տեղաբաշխման հարցերը կարգավորելու և արդյունավետ օգտագործելու համար:

Մակրոտնտեսական կարգավորման բազմաբնույթ և բազմատեսակ խնդիրների իմացությամբ բարձրորակ տնտեսագետ կադրեր պատրաստելու նպատակով ԵրՊՏԻ-ում բոլոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերում նախատեսված է «Մակրոտնտեսական կարգավորում»

առարկան: Սակայն դասագրքի նախապատրաստումը և հրատարակումը երկար ժամանակ կպահանջի, ուստի Մակրոէկոնոմիկայի ամբիոնը նպատակահարմար է գտնում ուսանողության պահանջն ավելի շուտ բավարարելու և դասագրքի հրատարակումն ավելի հիմնավոր նախապատրաստելու համար հրատարակել ուսումնական ձեռնարկ:

Ձեռնարկը շարադրված է «Մակրոտնտեսական կարգավորում» առարկայի ծրագրին համապատասխան և բաղկացած է 17 բաժիններից, որոնք ներկայացնում են մակրոտնտեսական կարգավորման առարկան, խնդիրները, մեթոդաբանությունը, կարգավորման մարմինների գործառույթները, մակրոտնտեսական քաղաքականությունը տարբեր ոլորտներում և սոցիալական ծրագրերը, ամբողջական եկամտի արտադրությունը, բաշխումը և օգտագործումը, տնտեսական աճի գնահատման մոդելները, ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը, ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի մոդելները, մակրոտնտեսական հավասարակշռությունը և ՀՀ գնագոյացման քաղաքականությունը:

Մակրոէկոնոմիկայի ամբիոնը գոհունակությամբ կընդունի ձեռնարկի վերաբերյալ ցանկացած դիտողություն և հաշվի կառնի դասագրքի հրատարակման ժամանակ:

Քանի որ ՀՀ անկախացումից հետո ձևավորվել են շուկայական տնտեսության վարման յուրահատուկ պայմաններ, իրավական ու քաղաքական նորմեր, որոնք նույնական չեն այլ երկրների տնտեսավարման պայմանների հետ, ուստի, կարևորվում է «Մակրոտնտեսական կարգավորում» դասագրքի հրատարակումը, որը կներկայացնի հանրապետության առանձնահատկությունները տնտեսավարման և դրա պետական կարգավորման գործընթացում:

Ուսումնական ձեռնարկի հեղինակներն են՝

տ.գ.դ., պրոֆեսոր Յ. Բ. Ղուշյանը (գլուխ 1-ին, 2-րդ, 3-րդ, 9-րդ, 16-րդ)

տ.գ.թ., դոցենտներ՝ Ի. Տ. Տիգրանյանը (առաջաբան, գլուխ 4-րդ, 7-րդ)

Ք. Ջ. Վարդանյանը (գլուխ 5-րդ, 14-րդ),

Յ. Ս. Հովհաննիսյանը (գլուխ 6-րդ, 15-րդ),

Ռ. Ս. Սանուկյանը (գլուխ 8-րդ),

Ծ. Ջ. Կարապետյանը (գլուխ 10-րդ),

Ա. Հ. Մուրադյանը (գլուխ 11-րդ),

Լ. Ա. Կիրակոսյանը (գլուխ 12-րդ),

տ.գ.թ., դոցենտ՝ Գ. Վ. Բաղդասարյանը (գլուխ 13-րդ, 17-րդ),

Լ. Հ. Ղուշյանը (գլուխ 16, համահեղինակությամբ):

Ուսումնական ձեռնարկի շարադրանքի ընդհանուր գիտական ղեկավարումն ու խմբագրումն իրականացրել է պրոֆեսոր Յ. Բ. Ղուշյանը:

Ձեռնարկը շարադրվել է այն օրերների ու օրենսդրական ակտերի շրջանակներում, որոնք գործել են ՀՀ-ում 2000թ. դրությամբ: Բնականաբար, տնտեսավարման իրավական դաշտի փոփոխության դեպքում դրանք կարտացոլվեն հետագա հրատարակություններում: